

այլասերման նրբուղին: Հայուն իրապես իր ցեղին կապուած ըլլալը այն ատեն միայն կը հասկցուի, երբ ան, օտար տարածուն լեզու մը գիտնալով հանդերձ, չի հեռանար Մեսրոպին անսման գիրերէն:

\*

Հայուն մէջ երկու հոգի կայ՝ վախկոտ մը եւ քաջ մը, կամ ստրուկ մը եւ հերոս մը: Ամէն ազգի մէջ վախկոտը կը կծկուի քաջին ետեւը. ընդհակառակն է Հայուն մէջ. քաջը կը գտնուի վախկոտին տակը: Ամէն բռնակալ կրնայ իր առաջին հոգին հանել: Հանե՞ց. սոսկալի է հրաշքը: Կը ցցուի պահեստի հոգին՝ խենթի սման: Ու կը զարնէ: Եւ իր հարուածը անսխալական է... Պապին պէս:

Երբ վտանգի օրերը անցնին, Հայը կը մեռցնէ իր մէջի հերոսը ու վախկոտին հետ քաջաբար շուկայ կ'իջնէ՝ գրաւելու՝ համար Ոսկեբերդ մը:

\*

Օտարներէն ոմանք կ'ըսեն, թէ առեւտուրի մէջ մէկ Հայ կրնայ խաբել երեք Իսրայելացի: Իրենց ըսածը հաստատելու համար, սակայն, երեք հրեայ չեն կրնար ճարել՝ իբր սուտ վկայ: Ու մանաւանդ կը մոռնան, որ քաղաքականութեան մէջ բաւական է եւրոպացի շոշորթ մը՝ խաբելու համար ամբողջ հայութիւնը: Հայը, որ շէնցնող է, որ կը շինէ ոչ միայն իրը այլ եւ ուրիշներունը, անշուշտ, ունի վաճառականական տաղանդ. սակայն իր այդ ճարպիկութիւնը սկսած է այն տեղէն, ուր դադար մը առած է աշխարհի քաղաքական խարդաւանքը:

Աշխարհը ընդգրկող խաբէութեան մանեակ մը կայ: Ճշդեմք անոր վրայ Հայուն տեղը: Հայը այդ խաբէութեան մանեակին մէջտեղէն կախուած մըն է: Կախուած է՝ իբր խաչեցեալ ու Միւսին պէս, չէ կրցած միւռննէ՛լ խաչագողի երեսը՝ քրիստոնեայ աշխարհին:

\*

Ըսինք, որ Հայը իր մէջ ունի հրեշտակային ու սաղայելական գիծեր: Արեւուն տակ ան անմեղ եղաւ՝ հրեշտակի մը պէս, ու այս պատճառով է, որ հող չունեցաւ երկրի վրայ: Հրեշտակները տեղ չունին աշխարհի մէջ: Եղաւ նաեւ սատանայի մը չափ խելացի, բայց, հակառակ իր խելքին, սատանայի մը պէս ալ մնաց միշտ դժոխքի մէջ: